

Յարգելի Անդամ ու Անդամուհիներ

Ս.Խաչ Հայաստանեայց Եկեղեցւոյ,

ծխական Խորհուրդիս կողմէ՝ ձեր բոլորին բարիգալուստ կը մաղթեմ ու յարգանք կը բարեւեմ:

Մեր անցեալի աշխատութեանց ընթացքին մեզ հանդէպ ցոյց տրուած վստահութեան ու քաջալերանքին համար կուզեմ յայտնել՝ մեր անկեղծ երախտագիտական զգացումներն ու խորին շնորհակալութիւնը:

Գանատայի Առաջնորդի Փոխանորդ Հոգեշնորհ Տ.Վազգէն Ծ. Վրդ. Քէշիշեանի Յուլիս 6.1979 թուակիր նամակով ծխական Խորհուրդիս իւրաքանչիւր անդամը, իբր ազգային, հրաւիրուեցաւ հանդիպումի մը, որը՝ հրահանգուած էր Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ: Այս հանդիպումը տեղի ունեցաւ Յուլիս 14,1979 Շաբաթ օր Ս.Երրորդութիւն Եկեղեցւոյ սրահին մէջ, ուր ներկայ էին Առաջնորդ Սրբազան Հայրը, Առաջնորդի Փոխանորդ Հայր Սուրբը, Թեմական Խորհուրդը՝ լման կազմով եւ մենք՝ 13 ազգայիններ:

Ըստ Առաջնորդ Սրբազան Հօր՝ այդ օրուան հանդիպումի գլխաւոր նպատակը Ս.Խաչ Համայնքը օրինաւոր միջոցներով հաստատել էր, որը նոյնպէս իղծն ու որոշումը եղած է Վեհափառ Հայրապետին:

Վերոյիշեալ պատմական հանդիպման ընթացքին զաղափարի փոխանակումներ եղան ու ի վերջոյ Առաջնորդ Սրբազան Հայրը բերանացիօրէն խօսք տուաւ որ՝ 13 հոգինոց Ս.Խաչ Համայնքի ներկայացուցիչները, լման կազմով, պիտի ընդունուին իբր Առժամեայ ծխական Խորհուրդ: Եւ Օգոստոս 1979ի Թեմական Խորհուրդի հերթական ժողովին այս որոշումը պիտի վաւերացուի ու մեզի պաշտօնապէս հաղորդուի:

Առաջնորդ Սրբազան Հայրը իր թիւ 26474 եւ Օգոստոս 14,1979 թուակիր նամակով Գանատայի Առաջնորդի Փոխանորդ Հոգեշնորհ Հայր Սուրբին տեղեկացուց թէ հետեւեալ անձերը նշանակուած են իբր /Առժամեայ ծխական Խորհուրդ/ Թորոնթոյի մէջ կազմուելիք երկրորդ ծուխին Ս.Խաչ Հայաստանեայց Եկեղեցի անունով՝

- Տօքթ. Վարդան Այնճեան
- Տիար Անդրանիկ Զաքարեան
- Տիար Սուրէն Էվրան
- Տիար Եղիա Թորոսեան
- Տիար Մարտիկ Հէքիմեան
- Տիար Յակոբ Նար
- Տիար Ղեւոնդ Շահմէլիքեան
- Տիար Լեւոն Չեօմլէքճեան
- Տօքթ. Վահէ Սվաճեան
- Տօքթ. Վաչէ Քերամեթլեան
- Տիար Յակոբ Քէլէշեան
- Տիար Արմէն Քիւրքճեան
- Տիար Ժան Ֆէնէրճեան

Ս.Խաչ Եկեղեցւոյ ծխական Խորհուրդը Օգոստոս 27, 1979 ին, Առաջնորդի Փոխանորդ Հոգեշնորհ Հայր Սուրբի նախագահութեամբ գումարուած ժողովին, գաղտնի բուկետրակութեամբ ընտրեց իր դիւանը՝ որը կազմուած էր հետեւեալ անդամներէ՝

- Տօքթ. Վարդան Այնաժեան՝ Ատենապետ
- Տիար Արմէն Քիւրքժեան՝ Փոխ Ատենապետ
- Տօքթ. Վահէ Սվաժեան՝ Ատենադպիր
- Տիար Լեւոն Չեօմլէքժեան՝ Փոխ Ատենադպիր
- Տիար Ղեւոնդ Շահմէլիքեան՝ Գանձապետ
- Տիար Ժան Փէնէրժեան՝ Փոխ Գանձապետ

Առաջնորդ Սրբազան Հօր թիւ 26507 եւ Սեպտեմբեր 13, 1979 թուակիր նամակով դիւանին վաւերացուած ըլլալը Առաջնորդի Փոխանորդ հոգեշնորհ Հայր Սուրբին տեղեկացուեցաւ:

Սեպտեմբեր 29, 1979էն սկսեալ Forest Grove United Church ի մէջ Ս. Պատարագ մատուցուեցաւ, ամէն Կիրակի ցերեկէն վերջ, ի բացառեալ Դեկտեմբեր 16, 1979 ին, նախապէս տրամադրուած ըլլալով ուրիշ եկեղեցական կազմակերպութեան մը:

Առաջնորդարանի վաւերացումը ստանալէ յետոյ Ս. Խաչ Հայց. Առաք. Եկեղեցւոյ անդրանիկ Ս. Պատարագը մատուցուեցաւ Առաջնորդի Փոխանորդ Հոգեշնորհ Տ. Վազգէն Ծ. Վրդ. Քէշիշեանի կողմէ: Իսկ յաջորդող Կիրակիներու համար ունեցանք իբր այցելու հովիւ՝ Արժանապատիւ Տ. Յուսիկ Քահանայ նշանեանը: Նոյեմբեր 10, 1979 Շաբաթ օր ծխական Խորհուրդս մասնակցեցաւ Սէյնթ Քաթրինայի Շրջանային ժողովին:

Ծխական Խորհուրդս ի նպաստ Ս. Խաչ Եկեղեցւոյ դաշտագնացութիւն մը կազմակերպեց, որը տեղի ունեցաւ Յուլիս 15, 1979 Կիրակի օր, Bruce's Mill Provencial Park ին մէջ:

Ս. Խաչ Եկեղեցին խորհրդակատարութիւններու շարքին ունեցաւ 5 մկրտութիւն եւ 19 հոգեհանգստեան խնդրանքներ:

Ծխական Խորհուրդիս հերթական ու ամիջական ժողովներու ընդհանուր թիւը 16 եղաւ:

Ծխական Խորհուրդս անգամ մը եւս կուզէ իր շնորհակալութիւնները յայտնել Հոգ. Տ. Վազգէն Ծ. Վրդ. Քէշիշեանի, Արժանապատիւ Տ. Յուսիկ Քհնյ. նշանեանի, Ս. Խաչ Ազգային Ամենօրեայ Վարժարանի Հոգաբարցութեան ժրջան Ատենապետ Տօքթ. Նուպար Ալեանքի, Վարժարանի Տիկնանց Օժանդակ Մարմնու Ատենապետուհի Տիկ. Նոյեմի Քէլէշեանի եւ բոլոր Վարչական եւ գործօն անդամներուն եւ նոյնպէս նաեւ Բարեշնորհ Մուրատ Ա. Սարկաւազ Գարագաշեանի, Սարկաւազներու եւ Դպրաց Դասի բոլոր անդամներուն որոնք անձնուէրօրէն ծառայեցին Ս. Խաչ Համայնքին յաջողութեան համար:

Ի Դիմաց ծխական Խորհուրդի  
Տօքթ. Ա. Վարդան Այնաժեան  
Ատենապետ

Դեկտեմբեր 31, 1979

Հակիրճ տեղեկատուութիւն Ս. Խաչ Ազգ. Ամն. Վարժարանի եւ Հոգաբարձութեան վեցամսեայ գործնէութեան մասին:

Ճանչնանք Ս. Խաչ Ամն. Վարժարանի Հոգաբարձութիւնն եւ Ուսուցչական կազմը:

Հոգաբարձութեան անդամներն են՝	
Ատենապետ՝	Տօթ. Նուպար Ալեանաք
Փոխ- ՝՝	Պրն. Կարօ Խաչայեան
Ատենադպիր՝	Տիկ. Թեֆոն Քէօշկէրեան
Փոխ- ՝՝	Պրն. Մուշեղ Շահազար
Գանձապահ՝	Պրն. Մարտիկ Տէմիրճեան
Փոխ- ՝՝	Պրն. Յովակիմ Օլթաճեան
Խորհրդական՝	Պրն. Ժիրայր Թորիկեան
՝՝	Պրն. Մակար Գուգուեան
՝՝	Պրն. Դանիէլ Զարուկեան

Հոգաբարձութեան պարտականութիւնն է հայթայթել դպրոցին նիւթաբարոյականը ծխական Խորհուրդի աջակցութեամբ:

1979-80 տարեշրջանի համար դպրոցին պիւտճէն նախատեսուած է 125,000.00 տուար: Ուրեմն Հոգաբարձութիւնը ոգի ի բոին պիտի աշխատի որ այդ տուեալ գումարը հայթայթէ, կատարելով զանազան ձեռնարկներ, դիմելով բարեսիրական մեծ հաստատութեանց օգնութեան. ինչպէս Հ.Բ.Ը. Միութեան, Գալուստ Կիւլպէնկեան, նուիրահաւաքում, բարերար անհատներու եւ ամէնէն կենսականը, Հայ ժողովուրդին բարիացակամ եւ լիառատ աջակցութեան:

Այս բոլոր վերոյիշեալ աշխատանքները կազմակերպուած առաջ տանելու համար, Հոգաբարձութիւնը գրեթէ ամէն շաբաթ ժողովներ կուներնայ դպրոցին մէջ:

Հոս, մեծ ուրախութեամբ կարելի է նշել թէ ներկայ Հոգաբարձութեան բոլոր անդամները անսակարկօրէն նուիրուած են տուեալ գործին եւ գիտակից են իրենց վստահուած պարտականութեանց լի ու լի:

Դպրոցի մասին

1979-80 տարեշրջանի Սեպտեմբեր 4ին Ս. Խաչ Ազգ. Ամն. Վարժարանը կրկին բացաւ իր դռները լայնօրէն Հայ մանուկին առաջ, ի ներկայութեան ծխական Խորհուրդի, Հոգաբարձութեան անդամներու եւ մեծ թիւով ծնողներու:

Այս օր դպրոցին աշակերտութան թիւն է 63 հոգի որոնք գտնեղուած են վեց դասարաններու մէջ:

	մանչ	աղջիկ	Թիւ
Բողբոջ	9	5	14
Կոկոն	4	9	13
Ճաղիկ	6	5	11
Ա. Դապարան	3	6	9
Բ.	5	5	10
Գ. ՝՝	1	5	6

Ս. Խաչ Ամն. Վարժարանի ուսուցչական կազմը հետեւեալն է:

- |                         |   |
|-------------------------|---|
| 1. Դպրոցին Տնօրէնուհին՝ | Տիկ. Տիանա Հանրմեան   |
| 2. Մանկապարտիզպանուհին՝ | Տիկ. Վրէժուհի Թովաճըեան   |
| 3. Տիկ. Յասմիկ Հացունի, | պատասխանատու մանկապարտէզի եւ Ա. դասարանի                            |
| 4. Տիկ. Սեղա Սահակեան,  | դասատու Հայերէնի Ա. եւ Բ. դասարան<br>Փրանսերէնի Ա. Բ. եւ Գ. դասարան |
| 5. Mrs. Ruth Rogers     | պատասխանատու կոկոն դասարանի Անգլերէնին                              |
| 6. Mrs. E. MacIver      | ՝՝ ծաղիկ ՝՝ ՝՝  |
| 7. Mrs. Betty Swann     | ՝՝ Ա. ՝՝ ՝՝   |
| 8. Mrs. M. Morrison     | ՝՝ Բ. եւ Գ. ՝՝ ՝՝   |

Դպրոցին տնտեսուհին է Տիկ. Մարի Գըրրզեան:

Աշակերտներու փոխադրութեան համար դպրոցը ունի օթոպիւսի սպասարկութիւն որուն համար կը վճարէ 40,000.00 տոլար:

Ծնողներու օժանդակութեամբ դպրոցը օժտուած է մանկական գրադարանով նաեւ մանկական երաժշտութիւն ունկնդրելու կարելիութեամբ:

Շաբաթը մի քանի անգամներ աշակերտութեան կը ցուցադրուի մանկական ժապաւէններ / շարժապատկեր / օգտուելով տեղական դպրոցի դիւրութիւններէն:

Աշակերտները ըստ կարելնոյն կ'այցելեն քաղաքին տեսարժան վայրերը ուր միշտ նորութիւններ ունին տեսնելիք եւ սորվելիք:

Տնօրէնութիւնն եւ ուսուցչական կազմ միակամ, համերաշխ եւ ներդաշնակօրէն յառաջ կը տանին դպրոցին կրթական եւ դաստիարակչական գործերը հաւասարապէս:

Դեկտեմբեր 31, 1979

Ս. Խաչ Ազգ. Ամն. Վարժարանի Հոգաբարձութիւն

Սուրբ Խաչ Հայց. Առաք. Եկեղեցի  
Ս. Խաչ Ազգ. Ամն. Վարժարանի Տիկնանց Օժանդակ Մարմնի  
Տեղեկատու ԼԵԹԻՆ  
/ Դեկտ. 2, 1978 - Դեկտ. 31, 1979 տարեշրջանի /

Տիկնանց Վարչութիւնը կազմուեցաւ ըստ հետեւեալին՝  
Տիկ. Նոյեմի Քէլէշեան.....Ատենապետուհի  
Օր. Զեփիւն Ազարեան.....Փոխ - Ատենապետուհի  
Օր. Նատին Ոսկանեան.....Ատենադպրուհի  
Տիկ. Սօֆի Գուգուեան.....Գանձապահուհի  
Տիկ. Արփի Նար.....Փոխ-Գանձապահուհի  
Տիկ. Շաքէ Օհաննէսեան.....Խորհրդական  
Տիկ. Աշխէն Մուրատեան..... ``  
Տիկ. Թալին Սարեան..... ``  
Տիկ. Մարի Պուլկուրեմէզ..... ``

Ս. Խաչ Ազգ. Ամն. Վարժարանին նիւթապէս ալ օգտակար ըլլալու համար վարչութիւնը որոշեց շահաբեր ձեռնարկներ կազմակերպել:

Առաջինը եղաւ Դեկտ. 2, 1978ի պազարը, Անկլիբան Եկեղեցիի սրահին մէջ, ուր ծախուեցան զանազան հաստատութիւններու կողմէ նուիրուած առարկաներ եւ Ս. Խաչ Եկեղեցւոյ եւ Վարժարանի համակիր տիկիներու պատրաստած խմորեղենները: Պազարը եղաւ հասուծաբեր եւ իր ապահոված գումարով քացուեցաւ Տիկնանցի դրամատան հաշիւը:

Յունուար 1979էն մինչեւ Մայիս ամիսներու երկրորդ Հինգշաբթի օրերը, Վարչութեան տիկիներու կողմէ պատրաստուած ճաշերով եղան ցերեկուայ ճաշի հիւրասիրութիւն եւ Պինկօ՛ի խաղ, ճաշի վերջաւորութեան:

Նոյն ամիսներու մէջ, տարբեր թուականներով եղան 6 Պինկօ՛ի զիշերներ, սուրճի եւ կարկանդակի հիւրասիրութեամբ: Վերոյիշեալ ձեռնարկները արդիւնաբեր ըլլալէ զատ, Ս. Խաչ՝ի համակիրները իրար մօտեցնելու եւ մտերմացնելու մէջ մեծ դեր ունեցան:

Զատիկուայ առթիւ 500 հատ հաւկիթ ու ներկ նուիրուեցան Տիկնանց Վարչութեան, Տիկ. Մելինէ Պօհչալեանի կողմէ, այս հաւկիթները ներկուելով Ապրիլ 15ին, Սէնթ Կարիէլի Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած պատարագի աւարտման, անդամուհիներու կողմէ քաժնուեցան հաւատացեալներու որոնց առատաձեռնութեամբ Տիկնանցի զանձին կոկիկ գումար մը աւելցաւ:

Օգոստոս 19, 1979ին Օնթերիօ լճին վրայ շոգենաւի շրջապոյտ մը կազմակերպուեցաւ. նախընտրուեցաւ որ տոմսերու գիները դիւրամատուցելի ըլլան, նկատի ունենալով այս պարագան խորհուեցաւ վիճակահանութեան դնել մեծ կողով մը լեցուն լաւորակ խմիչք եւ ծախել կոր պտուղներ, ծրարիկներով: Ակնկալուած հասոյթը ապահովուելէ զատ Վարչութիւնը արժանացաւ պտոյտի մասնակցողներու ջերմ գնահատանքին եւ քաջալերութեան:

Սեպտ. 22, 23, 24 ին Տօն Միլզ`ի շուկային մէջ տեղի ունեցաւ խմորեղենի վաճառք: Վարչութիւնս նիւթական շատ մեծ ու անսպասելի յաջողութիւն ունեցաւ շնորհիւ Ս. Խաչի համակիր անձնուէր ու ջանասէր իգական սեռի բանակին որ բազմատեսակ համեղ ու ընտիր խմորեղեններ տեղացուց այդ օրերուն: Ի դիմաց Տիկնանց Վարչութեան պարտք կ`զգամ բոլոր այն տիկիններուն շնորհակալութիւն յայտնել որոնք ամէն առթիւ մեր խնդրանքին աւելիով պատասխանած են սրտի զոհունականութեամբ:

Մեր յաջողութիւնները կը պարտինք բոլորիդ սիրայօժար համագործակցութեան եւ ազնիւ զգացումներուն: Կը խնդրեմ ձեզմէ ընդունիլ մեր անսահման շնորհակալութիւնները եւ երախտագիտութիւնը: Շարունակենք մեր բարի գործերը եւ ուխտենք վառ պահել Հայ Ազգի Կանթեղներէն մին` Թորոնթօյի ՍՈՒՐԲ ԽԱԶՆՆԵՐ:

Դեկտեմբեր 31, 1979

Ի Դիմաց Տիկնանց Վարչութեան  
Նոյեմի Քէլէշեան  
Ատենապետուհի

HOLY CROSS ARMENIAN CHURCH

INCOME STATEMENT

JANUARY 1, 1979 - DECEMBER 31, 1979

REVENUES

Cash in Bank (December 31, 1978)	1099.93	
Membership Dues	5770.00	
Donations	4373.00	
Plate Collections	7113.45	
Luncheon Honoring Bishop Aris Shirvanyan (Prince Hotel)	1963.00	
Annual Parish Picnic	2486.62	
Lottery - Re: Picnic	603.00	
Interest Received on Term Deposit	100.09	
<b>Total Income</b>		<b>24029.09</b>

EXPENSES

Advertising - Newspaper	129.36	
Church Rental Fees	1535.00	
Church Supplies	1007.53	
Hall Rental Fees	683.81	
Reception Expenses	260.86	
Office Supplies	807.64	
Mailer Expense	1174.99	
Telephone and Telegrams	535.32	
Travel Expense / Delegates	4242.00	
Travel Expense / Visiting Lecturer	150.00	
Clergy Expense	1061.00	
Luncheon Expense	2025.00	
Picnic Expense	1982.87	
Lottery Refunds	46.00	
Picnic - Morningside	257.65	
Bank Charges	12.74	
Incorporation Cost	622.00	
<b>Total Expenses</b>		<b>16533.77</b>

Cash in Bank ( December 31, 1979) 7495.32

Auditing Committee

H. Sahakian                      S. Shahnazar



HOLY CROSS ARMENIAN DAY SCHOOL

INCOME STATEMENT

SEPTEMBER 1978 - AUGUST 31, 1979

<u>REVENUES</u>	1978	1979	TOTAL
Donations	33485.00	13352.75	46837.75
Gala Banquet	8227.10		8227.10
New Year's Eve	2283.50		2283.50
Tuition and Transportation	6530.00	7528.00	14058.00
Lottery Sale	600.00		600.00
Resale of Leftover Food	125.40		125.40
Plate Collection		903.10	903.10
Calender Sale		1328.00	1328.00
Donations (Collected by Mrs. Alyanak)		4500.00	4500.00
Proceeds From Gomidas Cultural Assoc.		290.19	290.19
Spring Dance		18694.00	18694.00
Book Sales		279.00	279.00
	<hr/>	<hr/>	<hr/>
Total	51251.00	46875.04	98126.04
	<hr/> <hr/>	<hr/> <hr/>	<hr/> <hr/>
<u>EXPENSES</u>			
Total Salaries Paid	11402.10	22213.95	33616.05
Transportation	5080.99	10550.00	15630.99
Gala Banquet	6032.20		6032.20
Spring Banquet		9272.56	9272.56
Stationery, Books, Stamps, Printing	2320.71	3334.65	5655.36
Food, Drinks and Liquor	2247.64		2247.64
School Rent	1800.00	3300.00	5100.00
Hall and School Rental	370.00	1133.07	1503.07
Telephone	165.05	402.11	567.16
Revenue Canada		6202.06	6202.06
Furniture and Equipment	282.75	754.50	1037.25
Uniforms	132.40		132.40
Calender Printing		414.00	414.00
Insurance		628.00	628.00
Miscellaneous	252.90	126.39	379.29
Bank Charges		33.94	33.94
Advertising		20.00	20.00
Prepaid Transportation	1500.00	1000.00	2500.00
	<hr/>	<hr/>	<hr/>
Total	31586.74	59385.23	90971.97
Bank Balance at Scholastic Year End			7154.07
			<hr/>
			98126.04
			<hr/> <hr/>
Auditing Committee			
H. Sahakian	S. Shahnazar		
			



